

Կ-414-06.12.2019-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ներման մասին» 2018 թվականի մարտի 7-ի ՀՕ-149-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Ներման խնդրագիրը չի քննարկվում և վերադարձվում է այն ներկայացնող անձին, եթե վերջինս ներման խնդրագիր ներկայացնելուց հետո պատժի կրումից ազատվել է պայմանական վաղաժամկետ, համաներման կամ պատժից ազատելու օրենքով նախատեսված այլ հիմքերով, ինչպես նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված ժամկետը չլրանալու դեպքում»:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «հնգօրյա» բառը փոխարինել «տասնօրյա» բառով,

2) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. -Մարդու դեմ ուղղված հանցագործության համար դատապարտված անձի կողմից ներման խնդրագիր ներկայացնելու դեպքում Նախարարությունը մինչև անձնական գործը Վարչապետին ներկայացնելը ծանուցում է տուժողին կամ նրա իրավահաջորդին: Տուժողը կամ նրա իրավահաջորդը նախարարության ծանուցումն ստանալուց հետո, բայց ոչ ուշ քան Վարչապետի կողմից ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկությունը Հանրապետության նախագահին ներկայացնելը, կարող է գրավոր կարծիք ներկայացնել Նախարարություն՝ ներում շնորհելու կամ ներում շնորհելը մերժելու վերաբերյալ: Նշված ժամկետում կարծիք չներկայացնելը արգելք չէ ներման խնդրագիրը քննարկելու համար»:

3) 3-րդ մասում «ներման միջնորդությունները (առկայության դեպքում)» բառերից հետո լրացնել «տուժողի կամ նրա իրավահաջորդի՝ ներում շնորհելու կամ ներում շնորհելը մերժելու վերաբերյալ գրավոր կարծիքը (առկայության դեպքում)» բառերը.

4) 4-րդ մասում «հնգօրյա» բառը փոխարինել «ոչ ուշ, քան 10-օրյա» բառերով.

5) 5-րդ մասից հանել «կամ ներման շնորհումը մերժելու» բառերը.

6) 7-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1 մասով.

«7.1. Անձնական գործը, Հանձնաժողովի եզրակացությունը, տուժողի կամ նրա իրավահաջորդի՝ ներում շնորհելու կամ ներում չնորհելը մերժելու վերաբերյալ գրավոր կարծիքը, ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման չնորհումը մերժելու մասին առաջարկությունը ենթակա չէ հրապարակման և փոխանցման (տրամադրման) երրորդ անձանց:»:

### **Հոդված 3.** Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պատժի՝ օրենքով սահմանված մասի կեսը:»

2) 3-րդ մասում «քսան» բառը փոխարինել «տասնհինգ» բառով:

### **Հոդված 4.** Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հանրապետության նախագահի աշխատակազմը ներման խնդրագրերի մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ընդունվելուց հետո՝ ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում հրամանագիրը և դրանից արված քաղվածքը ուղարկում է նախարարություն, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն: Նախարարությունը, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը հրամանագիրը և քաղվածքը ստանալուց հետո անհապաղ ուղարկում է ներման խնդրագիր ներկայացրած անձին:»:

2) 7-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.

«8. Նախարարությունը ներման խնդրագրերի մասին Հանրապետության նախագահի հրամանագրից քաղվածքները ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, դրանք տեղադրում է Նախարարության պաշտոնական կայքէջում:»:

**Հոդված 5.** Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Բացառիկ կարող են ճանաչվել դատապարտյալի՝ առողջական վիճակով պայմանավորված կյանքին սպառնացող անմիջական վտանգը, դատապարտյալի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի առկայությունը, արտակարգ կամ ռազմական դրությունը, քրեակատարողական հիմնարկում առաջացած արտակարգ իրավիճակներում դատապարտյալի կողմից ցուցաբերված բացառիկ օգնությունը և համանման այլ հանգամանքներ:

Հանգամանքը բացառիկ գնահատելու հարցը լուծում է Վարչապետը դատապարտյալի ներման խնդրագրի վերաբերյալ Նախարարության կողմից առաջարկությունը ստանալու պահից 3 օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ հանգամանքը գնահատվում է բացառիկ, ներման խնդրագրի քննությունը շարունակվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:»:

**Հոդված 6.** Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում «տեղեկացնում են» բառերից հետո լրացնել «Նախարարությանը, Վարչապետի և» բառերը, իսկ «կայացրած» բառից հետո հանել «հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու մասին» բառերը:

### **Հոդված 7. Եզրափակիչ դրույթներ**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և դրա գործողությունը տարածվում է ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

**ՏԵՂԵԿԱՆՔ**  
**«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ Կ-414-06.12.2019-ՊԻ-011/1 ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

Կ-414-06.12.2019-ՊԻ-011/1

Առաջին ընթերցում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ներման մասին» 2018 թվականի մարտի 7-ի ՀՕ-149-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Ներման խնդրագիրը չի քննարկվում և վերադարձվում է այն ներկայացնող անձին, եթե վերջինս ներման խնդրագիր ներկայացնելուց հետո պատժի կրումից ազատվել է պայմանական վաղաժամկետ, համաներման կամ պատժից ազատելու օրենքով նախատեսված այլ հիմքերով, ինչպես նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ ~~և կամ~~ 3-րդ մասերով սահմանված ժամկետը չլրանալու դեպքում»:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «հնգօրյա» բառը փոխարինել «տասնօրյա» բառով,

2) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. ~~Առանձնապես ծանր Մարդու դեմ ուղղված~~ հանցագործության համար դատապարտված անձի կողմից ներման խնդրագիր ներկայացնելու դեպքում Նախարարությունը մինչև ~~անձնական գործի Վարչապետին ներկայացնելը~~ ~~Հանձնաժողովի նիստի կայանալը~~ ծանուցում է տուժողին կամ նրա իրավահաջորդին: Տուժողը կամ նրա իրավահաջորդը նախարարության ծանուցումն ստանալուց հետո, բայց ոչ ուշ քան Վարչապետի կողմից ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկությունը Հանրապետության նախագահին ներկայացնելը,` ~~5-օրյա ժամկետում~~ կարող է գրավոր կարծիք ներկայացնել Նախարարություն՝ ներում շնորհելու կամ ներում շնորհելը մերժելու վերաբերյալ: Նշված ժամկետում կարծիք չներկայացնելը արգելք չէ ներման խնդրագիրը ~~Հանձնաժողովի նիստում~~ քննարկելու համար:»:

3) 3-րդ մասում «ներման միջնորդությունները (առկայության դեպքում)» բառերից հետո լրացնել «տուժողի կամ նրա իրավահաջորդի՝ ներում շնորհելու կամ ներում շնորհելը մերժելու վերաբերյալ գրավոր կարծիք (առկայության դեպքում)» բառերը.

4) 4-րդ մասում «հնգօրյա» բառը փոխարինել «ոչ ուշ, քան 1045-օրյա» բառերով:

45) 5-րդ մասից հանել «կամ ներման շնորհումը մերժելու» բառերը.

56) 7-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1 մասով.

«7.1. Անձնական գործը, Հանձնաժողովի եզրակացությունը, [տուժողի կամ նրա իրավահաջորդի՝ ներում շնորհելու կամ ներում չնորհելը մերժելու վերաբերյալ գրավոր կարծիքը](#), ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկությունը ենթակա չէ հրապարակման և փոխանցման (տրամադրման) երրորդ անձանց:»:

**Հոդված 3.** Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Որոշակի ժամկետով ազատագրվման դատապարտված և ազատագրվման ձևով պատիժ կրող անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պատժի՝ օրենքով սահմանված մասի կեսը:»

2) 3-րդ մասում «քսան» բառը փոխարինել «տասնհինգ» բառով:

**Հոդված 4.** Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հանրապետության նախագահի աշխատակազմը ներման խնդրագրերի մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ընդունվելուց հետո՝ ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում հրամանագիրը և դրանից արված քաղվածքը ուղարկում է նախարարություն, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն: Նախարարությունը, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ նաև պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը հրամանագիրը և քաղվածքը ստանալուց հետո անհապաղ ուղարկում է ներման խնդրագիր ներկայացրած անձին:»:

2) 7-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.

«8. Նախարարությունը ներման խնդրագրերի մասին Հանրապետության նախագահի հրամանագրից քաղվածքները ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, դրանք տեղադրում է Նախարարության պաշտոնական կայքէջում:»:

**Հոդված 5.** Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Բացառիկ կարող են ձանաչվել դատապարտյալի՝ առողջական վիճակով պայմանավորված կյանքին սպառնացող անմիջական վտանգը, դատապարտյալի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի առկայությունը, արտակարգ կամ ռազմական դրությունը,

քրեակատարողական հիմնարկում առաջացած արտակարգ իրավիճակներում դատապարտյալի կողմից ցուցաբերված բացառիկ օգնությունը և համանման այլ հանգամանքներ:

Հանգամանքը բացառիկ գնահատելու հարցը լուծում է Վարչապետը դատապարտյալի ներման խնդրագրի վերաբերյալ Նախարարության կողմից առաջարկությունը ստանալու պահից 3 օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ հանգամանքը գնահատվում է բացառիկ, ներման խնդրագրի քննությունը շարունակվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:»:

**Հոդված 6.** Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում «տեղեկացնում են» բառերից հետո լրացնել «Նախարարությանը, Վարչապետի և» բառերը, իսկ «կայացրած» բառից հետո հանել «հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու մասին» բառերը:

### **Հոդված 7. Եզրափակիչ դրույթներ**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և դրա գործողությունը տարածվում է ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-414-06.12.2019-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| №  | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը   | Առաջարկություն (փոփոխություն, լրացում)  | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը   | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|----|---|--|---|--|---|
|    |   |  |   |  |   |
| 1. | Ազգային ժողովի պատգամավոր Աննա Կարապետյան     | «Ներման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) 1-ին հոդված: | Նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով. «9. Ներման խնդրագիրը չի քննարկվում և վերադարձվում է այն ներկայացնող անձին, եթե նա ներման խնդրագիր ներկայացնելուց հետո՝ օրենքով նախատեսված հիմքով վաղաժամկետ ազատվել է պատժի կրումից, ինչպես նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված ժամկետը չլրանալու դեպքում:»: | Ընդունվել է մասնակի: Նախագծի 1-ին հոդվածում «2-րդ» բառից հետո գործածվող «և» շաղկապը փոխարինվել է «կամ»-ով: Մյուս փոփոխությունները կատարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ Նախագծի տեքստով առավել հստակ են երևում պատժից ազատման հիմքերը (օրենքով նախատեսված հիմքով վաղաժամկետ ազատմանը չի վերաբերում կարգավորումը, այլ օրենքով նախատեսված որևէ հիմքով պատժից ազատմանը, որի մեջ | Ընդունվել է:  |

|    |   |                               |   | մտնում է նաև վաղաժամկետ ազատումը):                 |              |
|----|---|-------------------------------|---|--|--------------|
| 2. | Կառավարություն                            | Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ | Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում «Առանձնապես ծանր» բառերը փոխարինել «Մարդու դեմ ուղղված» բառերով՝ այդպիսով ընդլայնելով այն հանցագործությունների ցանկը, որոնցով տուժողները կարող են կարծիք հայտնել:  | Ընդունվել է:                                       | Ընդունվել է: |
| 3. | Կառավարություն                            | Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ | Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում «Հանձնաժողովի նիստի կայանալը» բառերը փոխարինել «անձնական գործը Վարչապետին ներկայացնելը» բառերով:   | Ընդունվել է:                                       | Ընդունվել է: |
| 4. | Կառավարություն                            | Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ | Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում «5-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «բայց ոչ ուշ, քան Վարչապետի կողմից ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկությունը Հանրապետության նախագահին ներկայացնելը,» բառերով: | Ընդունվել է:                                       | Ընդունվել է: |
| 5. | Կառավարություն                            | Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ | Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետից հանել «Հանձնաժողովի նիստում» բառերը:  | Ընդունվել է:                                       | Ընդունվել է: |
| 6. | Ազգային ժողովի պատգամավոր Աննա Կարապետյան | Նախագծի 2-րդ հոդված           | Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով՝ «3-րդ մասում «ներման միջնորդությունները (առկայության  | Ընդունվել է: Ըստ այդմ՝ փոփոխվել են հաջորդիվ մասերի | Ընդունվել է: |



|    |                |                               |  |                   |              |
|----|----------------|-------------------------------|--|-------------------|--------------|
|    |                |                               | դեպքում)» բառերից հետո լրացնել «տուժողի կամ նրա իրավահաջորդի՝ ներում շնորհելու կամ ներում շնորհելը մերժելու վերաբերյալ գրավոր կարծիքը (առկայության դեպքում)» բառերը »:   | համարակալումները: |              |
| 7. | Կառավարություն | Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետ | Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետում 3-րդ կետում «45-օրյա» բառը փոխարինել «10-օրյա» բառով:   | Ընդունվել է:      | Ընդունվել է: |
| 8. | Կառավարություն | Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետ | Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետում (վերահամարակալվել է որպես 6-րդ կետ) առաջարկվում է «Հանձնաժողովի եզրակացությունը,» բառերից հետո լրացնել «տուժողի կամ նրա իրավահաջորդի՝ ներում շնորհելու կամ ներում շնորհելը մերժելու վերաբերյալ գրավոր կարծիքը,» բառերը: | Ընդունվել է:      | Ընդունվել է: |